ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մանուկյան,

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 145-րդ հոդվածի 4.1.–րդ մասով և «Ուժեղ Հայաստան» խմբակցության 2026 թվականի հոկտեմբերի 09–ին «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածու առաջադրելու վերաբերյալ» որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածու է առաջադրվել Տարոն Սիրակի Վարազդատյանը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Ուժեղ Հայաստան» խմբակցության անունից Տարոն Սիրակի Վարազդատյանին իրավասու է ներկայացնելու Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Արմենի Աբրահամյանը:

Կից ներկայացվում է «Ուժեղ Հայաստան» խմբակցության 2026 թվականի հոկտեմբերի 09–ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածու առաջադրելու վերաբերյալ» որոշումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի համար Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

12.10.2026թ.

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0095, Մարշալ Բաղրամյան պող. 19
Հեռ՝ +374 (11) 513 205

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ուժեղ Հայաստան» խմբակցությունը (այսուհետ նաև՝ Խմբակցություն)՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 199-րդ հոդվածի 2-3-րդ մասերով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 145-րդ հոդվածի 4.1.-րդ մասով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում թեկնածու առաջարդել Տարոն Սիրակի Վարազդատյանին:

2. Խմբակցության անունից Տարոն Սիրակի Վարազդատյանին իրավասու է ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Արմենի Աբրահամյանը,

3. Խմբակցության որոշումը, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

12.10.2026թ.

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0095, Մարշալ Բաղրամյան պող. 19
Հեռ՝ +374 (11) 513 205

ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Տարոն Սիրակի Վարազդատյանը
/անուն, հայրանուն, ազգանուն/

Անձը հաստատող փաստաթուղթ՝ տրված՝ կողմից
/սերիա, համար/ /ամսաթիվ և ում կողմից/

վերջին չորս տարում հանդիսանում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի և վերջին չորս տարում մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնի գլխավոր մասնագետ Նելլի Ոսկանյան

Ստորագրող
ՆԵԼԼԻ ՈՍԿԱՆՅԱՆ

2026-10-12 12:22:38 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ. Տ.

«12» 10 2026թ.

N 42/94/6/314624-26

Տարոն Վարազդատյան

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Տարոն Սիրակի Վարազդատյանս, ծնվել եմ 1992 թվականի հոկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում, որտեղ և ստացել եմ միջնակարգ կրթություն՝ 2007 թվականին ավարտելով Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը: 2004–2007 թվականներին մաթեմատիկայի աշակերտական օլիմպիադայի Վայոց ձորի մարզային առաջնությունում զբաղեցրել եմ 1-ին տեղը:

2007 թվականին՝ դեռ 15 տարեկանս չլրացած, ընդունվել, իսկ 2011 թվականին ավարտել եմ Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ բակալավրիատը՝ ստանալով կառավարման բակալավրի աստիճան «Կառավարում» մասնագիտությամբ՝ դառնալով նշված մասնագիտությամբ նույն բուհի առաջին տարվա շրջանավարտներից մեկը: Այնուհետև 2011 թվականին ընդունվել և 2013 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Մայր բուհի նույն ֆակուլտետի առկա ուսուցմամբ «Գործարար կառավարում» մագիստրոսական ծրագիրը՝ ստանալով կառավարման մագիստրոսի աստիճան «Կառավարում» մասնագիտությամբ:

2013 թվականին ընդունվել և 2016 թվականին ավարտել եմ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Հանրային կառավարման ամբիոնի «Ը.00.02 - Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ առկա ուսուցմամբ ասպիրանտուրան և 2016 թվականի հունիսին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի կողմից ինձ շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, որի ստացմամբ պայմանավորված՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ե» ենթակետի համաձայն ազատվել եմ պարտադիր զինվորական ծառայությունից:

2023 թվականին ընդունվել և 2025 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի ինստիտուտի առկա ուսուցմամբ «Գործարարական իրավունք» մագիստրոսական ծրագիրը՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան «Իրավագիտություն» մասնագիտությամբ:

2025 թվականի հոկտեմբեր ամսից հանդիսանում եմ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի ինստիտուտի Իրավունքի տեսության և

սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ «ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական և հանրային կառավարում)» մասնագիտությամբ: Ներկայումս, իմ դիմումի համաձայն, հայցորդության ուսումնառությունս ժամանակավորապես կասեցված է:

Հեղինակ եմ թվով 9 գիտական հոդվածների, հանդես եմ եկել մի քանի գիտական զեկուցումներով Հայաստանի Հանրապետությունում անցկացված միջազգային և ազգային տարբեր գիտաժողովների ժամանակ:

2017 թվականի հոկտեմբեր ամսին Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի կողմից ստացել եմ աուդիտորի և հաշվապահի որակավորումներ: Ներկայումս ունեմ աուդիտորի և փորձագետ հաշվապահի գործող որակավորումներ՝ շնորհված Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կողմից 2020 թվականի նոյեմբեր ամսին:

2018 թվականի մայիս ամսից անդամակցում եմ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատին (նախկին անվանումը՝ Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա), իսկ նույն ամսից մինչև 2021 թվականի մայիս ամիսը հանդիսացել եմ նշված կառույցի վերստուգիչ հանձնաժողովի անդամ: 2021 թվականի հունիս ամսից մինչև 2023 թվականի հունիս ամիսը հանդիսացել եմ կարգապահական հանձնաժողովի անդամ, իսկ 2023 թվականի օգոստոս ամսից մինչև 2025 թվականի օգոստոս ամիսը՝ որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամ: 2021 թվականի մայիս ամսից մինչև 2025 թվականի մայիս ամիսը հանդիսացել են Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի խորհրդի անդամ:

2012 թվականի մայիս ամսից մինչև 2019 թվականի նոյեմբեր ամիսն աշխատել եմ «Նեքսիա Արմենիա» ՓԲԸ-ի (նախկին անվանումը՝ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ) աուդիտորական ծառայությունների բաժնում՝ նախ որպես աուդիտորի օգնական, 2015 թվականի ապրիլ ամսից՝ ավագ աուդիտոր, իսկ արդեն 2018 թվականի փետրվարի ամսից՝ աուդիտի մենեջեր: 2018 թվականի հունվար ամսից մինչև 2019 թվականի նոյեմբեր ամիսը հանդիսացել եմ գրեթե բոլոր աուդիտորական առաջադրանքների աուդիտի պատասխանատու ղեկավարը (անկախ աուդիտորական եզրակացությունը ստորագրող պատասխանատու աուդիտորը): 2013 թվականին արժանացել եմ «Տարվա լավագույն աշխատակից» մրցանակին: 2017 թվականի մայիս ամսից մինչև 2019 թվականի նոյեմբեր ամիսը՝ որպես «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից լիազոր ներկայացուցիչ, հանդիսացել եմ

Տարոն Վարազդատյան

«Գուդկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի վերստուգող՝ ունենալով վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի (վերստուգողի) պաշտոնում աշխատելու համար վկայական և գրանցված լինելով ՀՀ կենտրոնական բանկում:

2017 թվականի հունվար ամսից մինչև նույն տարվա օգոստոս ամիսը համատեղությամբ հանդիսացել եմ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս:

2019 թվականի փետրվար ամսից մինչև նույն տարվա օգոստոս ամիսը պայմանագրային հիմունքներով, իսկ արդեն 2019 թվականի սեպտեմբեր ամսից մինչև օրս համատեղությամբ հանդիսանում եմ Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ, դասախոս:

2019 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2025 թվականի հունվար ամիսը հանդիսացել եմ «ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի մասնակից, տնօրեն և կառավարող գործընկեր: Նշված պաշտոնում ինչպես անմիջականորեն, այնպես էլ առանձին գործառույթների և/կամ ծառայությունների պատասխանատու ղեկավարների միջոցով համակարգել և ղեկավարել եմ ընկերության կողմից մատուցվող աուդիտորական, հաշվապահական, հարկային, ֆինանսական, բիզնես, իրավաբանական և պետական գնումների ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացը: 2022 թվականի փետրվար ամսից մինչև 2025 թվականի հունվար ամիսը հանդիսացել եմ ընկերության կողմից իրականացվող բոլոր աուդիտորական առաջադրանքների պատասխանատու ղեկավարը:

2025 թվականի հոկտեմբեր ամսին հիմնադրել եմ «ԹիՎիԷս Ընդ Փարթներս Խորհրդատվական Խումբ» ՓԲԸ-ն և հիմնադրման օրվանից հանդիսանում եմ գլխավոր տնօրենը: Ընկերությունը ծառայություններ է մատուցում խորհրդատվության, հաշվապահական և հարկային հաշվառման, իրավաբանական սպասարկման ուղղություններով, իսկ արդեն 2026 թվականի մարտ ամսից սկսած, հանդիսանում է նաև աուդիտորական կազմակերպություն, և ինքս նշված ամսաթվից ի վեր, հանդիսանում եմ ընկերության կողմից իրականացվող բոլոր աուդիտորական առաջադրանքների պատասխանատու ղեկավարը:

Արտաքին և ներքին աուդիտի, հաշվապահական հաշվառման և հարկային խորհրդատվության ոլորտներում, ընդհանուր առմամբ, ունեմ ավելի քան 14 տարվա

(որից՝ արտաքին աուդիտի փորձը՝ ավելի քան 11 տարի) աշխատանքային փորձ, որի կեսից ավելին՝ ղեկավար պաշտոններում:

2026 թվականի հունիս ամսին կայացած ՀՀ Ազգային ժողովի խորհրդարանական ընտրություններում «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից առաջադրվել եմ պատգամավորի թեկնածու:

Անկուսակցական եմ և երբևէ չեմ անդամակցել որևէ կուսակցության:

Ազգությամբ հայ եմ, մինչև այժմ հանդիսացել և ներկայումս հանդիսանում եմ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Ամուսնացած չեմ և չեմ եղել:



Տարոն Սիրակի Վարազդատյան

Ծննդյան ամսաթիվ:	21 հոկտեմբերի 1992թ.
Ծննդյան վայրը:	ՀՀ, Վայոց ձորի մարզ, քաղաք Եղեգնաձոր
Ազգությունը:	Հայ
Քաղաքացիությունը:	Հայաստանի Հանրապետություն
Գրանցման հասցե:	
Բնակության հասցե:	
Հեռ. բջջային:	
Անձնական էլ. փոստ:	
Ամուսնական կարգավիճակը	Չամուսնացած
Կուսակցական պատկանելությունը:	Անկուսակցական (երբևէ չի անդամակցել)

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

2025թ. հոկտեմբեր - այժմ

«Թի Վի Էս Ընդ Փարթներս Խորհրդատվական Խումբ» ՓԲԸ
Աուդիտ, խորհրդատվություն, հաշվապահական և հարկային հաշվառում, իրավաբանական սպասարկում

- *Հիմնադիր / Գլխավոր տնօրեն*

2019թ. փետրվար - այժմ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (համատեղությամբ)

«Կառավարման և գործարարության» ամբիոնի ասիստենտ

Կարդացվող դասընթաց.

- ✓ *Հարկերի կառավարումը կազմակերպություններում*

2019թ. դեկտեմբեր - 2025թ. փետրվար

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
Աուդիտ, խորհրդատվություն, հաշվապահական հաշվառում

- *Տնօրեն / Կառավարող գործընկեր*

Ինտերնետային կայք-էջ՝ www.kmg.am

2012թ. մայիս – 2019թ. նոյեմբեր

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ (նախկին անվանումը՝ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ)

➢ *Աուդիտի մենեջեր (մինչև 2018թ. փետրվար՝ ավագ աուդիտոր, մինչև 2015թ. ապրիլ՝ աուդիտորի օգնական)*

Աշխատանքային հիմնական պարտականություններն են.

- ✓ *Աուդիտի պլանավորում,*
- ✓ *Աուդիտորական առաջադրանքների պատասխանատու թիմի աշխատանքների բաշխում, կոորդինացում և վերահսկում,*
- ✓ *Աուդիտորական թեստերի, ստուգումների, դիտարկումների, վերլուծական ընթացակարգերի իրականացում,*
- ✓ *Ներքին վերահսկողական համակարգերի թեստավորում, դրանց արդյունքների վերաբերյալ ղեկավարությանն ուղղված հաշվետվության կազմում,*
- ✓ *Աուդիտորական եզրակացությունների նախագծերի պատրաստում,*
- ✓ *Աուդիտի իրականացման ժամանակ հայտնաբերված նշանակալի հարցերի վերաբերյալ հաշվետվությունների կազմում, ինչպես նաև վերահսկողության միջոցների նկատված թերությունների վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում,*
- ✓ *Ֆինանսական և կառավարչական հաշվետվությունների պատրաստման և հարակից այլ ծառայությունների (կոմպիլյացիա, համաձայնեցված ընթացակարգեր) իրականացում, դրանց հետ կապված սկզբնական փաստաթղթերի կազմում, գրանցում և այլ աշխատանքներ,*
- ✓ *Գույքագրման աշխատանքների պլանավորում, գույքագրման գործընթացի կազմակերպում և գույքագրման արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում:*

Ինտերնետային կայք-էջ՝ www.nexia.am

➢ *«Գուդկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի վերստուգող (2017 թվականի մայիս ամսից)՝ գրանցված ՀՀ կենտրոնական բանկում՝ որպես «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից լիազոր ներկայացուցիչ*

2017թ. հունվար - 2017թ. օգոստոս

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ (համատեղությամբ)

«Տնտեսագիտության և կառավարման» ամբիոնի դասախոս

Կարդացվող դասընթացներ.

- ✓ *Վիճակագրություն և հաշվապահական հաշվառում,*
- ✓ *Բիզնեսի հիմունքներ:*

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

2011թ. մարտ - 2011թ. ապրիլ

«Էվոկաբանկ» ՓԲԸ (նախկին անվանումը՝ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ)

2010թ. հուլիս - 2010թ. օգոստոս

ՀՀ ԿԱ ՊԵԿ, եղեգնաձորի տարածքային հարկային տեսչություն

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2023թ. օգոստոս - 2025թ. օգոստոս	*Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամ*
2021թ. մայիս - 2025թ. մայիս	*Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի խորհրդի անդամ*
2021թ. հունիս - 2023թ. հունիս	*Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամ*
2018թ. մայիս - 2021թ. մայիս	*Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի վերստուգիչ հանձնաժողովի անդամ*
2018թ. մայիս - այժմ	*Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի անդամ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունիս	*ՀՀ ԱԺ ընտրություններում «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինք, պատգամավորի թեկնածու*

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

2025թ. հոկտեմբեր -	**Հայցորդ, «ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական և հանրային կառավարում)» մասնագիտությամբ**	Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, Իրավունքի ինստիտուտ, Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն
2023թ. սեպտեմբեր - 2025թ. հունիս	**Դիպլոմ (Գերազանցության) Իրավագիտության մագիստրոսի**	Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, Իրավունքի ինստիտուտ
2016թ. հունիս	**Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան** **Թեմա՝** «Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման արդի հիմնախնդիրների հաղթահարման ուղիները ՀՀ-ում»	ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհուրդ
2013թ. հունիս - 2016թ. հունիս	**Ասպիրանտուրա, «Ը.00.02 - Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ**	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
2011թ. սեպտեմբեր - 2013թ. մայիս	**Դիպլոմ (Գերազանցության) Կառավարման մագիստրոսի**	Երևանի պետական համալսարան, Տնտեսագիտության ֆակուլտետ
2007թ. սեպտեմբեր - 2011թ. մայիս	**Դիպլոմ Կառավարման բակալավրի**	Երևանի պետական համալսարան, Տնտեսագիտության ֆակուլտետ

Էջ՝ 3՝ 6-ից

1999–2007թթ.	**Ատեստատ Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության**	Եղեգնաձորի «Հովհաննես Հովհաննիսյանի անվան» թիվ 2 միջնակարգ դպրոց

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայերեն	Գերազանց
Ռուսերեն	Լավ
Ֆրանսերեն	Լավ
Անգլերեն	Լավ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Windows, MS Office, AS Accountant, 1C, E-Invoicing, Taxservice

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2020թ. նոյեմբեր	**Վկայական № Ա 0010**	**Աուդիտորի որակավորում**	«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ
2020թ. նոյեմբեր	**Վկայական № ՓՀ 0010**	**Փորձագետ հաշվապահի որակավորում**	«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ
2017թ. դեկտեմբեր	**Վկայական № 559**	**Աուդիտորի որակավորում**	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
2017թ. հոկտեմբեր	**Վկայական № 000185**	**Աուդիտորի որակավորում**	«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» ՀԿ
2017թ. հոկտեմբեր	**Վկայական № 000177**	**Հաշվապահի որակավորում**	«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» ՀԿ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ (ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

2024թ.	«ԱՊՀ երկրներում հայկական ջրային ռեսուրսների արդյունաբերության արտահանման առավելության գնահատումը»	«Գիտությունը ժամանակակից հասարակությունում» 10-րդ միջազգային գիտական կոնֆերանս, 06-07 օգոստոսի 2024թ., Պեկին, Չինաստան, ISBN 978-91-65423-80-0, համահեղինակությամբ՝ Արամ Առաքելյանի, Հայկ Բաղդասարյանի, Ռաֆիկ Մաշուրյանի
2020թ.	«Տնտեսական մրցակցության պաշտպա-	«Պատմություն և քաղաքակա-

էջ 4՝ 6-ից

	նության համակարգի կայացվածության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում»	նություն» գիտական հանդես, 6 (11) / 2020, համահեղինակությամբ՝ Կառլեն Խաչատրյանի
2015թ.	«ՀՀ պետական մարմինների համագործակցության ուղիները մրցակցության պաշտպանության բնագավառում»	«Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, 2015 # 4, Հոկտեմբեր – Դեկտեմբեր, 2015 թ.
2015թ.	«Տնտեսական մրցակցության պաշտպանության և մենաշնորհների պետական կարգավորման բարելավման ուղիները ՀՀ-ում»	«Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, 2015 # 4, Հոկտեմբեր – Դեկտեմբեր, 2015 թ.
2015թ.	«Բնական մենաշնորհների դրսևորումները ՀՀ-ում»	Եվրոպական ակադեմիա: Գիտ. հոդվածների ժղվ. / ԵՏԱ. – Եր.: «ԵՏԱ» հրատ., 2015: Գիրք 6
2015թ.	«Անբարեխիղճ մրցակցությունը որպես ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտ»	Զարգացման ժամանակակից մարտահրավերներ, ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի (2014 թ. հոկտեմբերի 29-31) նյութեր, I / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2015
2014թ.	«Հակամրցակցային համաձայնությունները ՀՀ պետական գնումների համակարգում»	«Հանրային կառավարում» գիտական հանդես (Հատուկ թողարկում) 3-4/2014: Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Միջբուհական գիտաժողովի (27-28 մարտի 2014 թ.) նյութերի ժողովածու, Մաս 1 / ՀՀՊԿԱ: - Երևան: «Պետական ծառայություն», 2014
2014թ.	«Մենաշնորհների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում»	Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 2-րդ գիտաժողովի նյութեր: - Եր.: ԵՊՀ ԵԳՄ, 2014
2013թ.	«Մենաշնորհի ցածր գները և դրանց կանխման անհրաժեշտությունը ՀՀ-ում»	«Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես # 11-12 (161-162) նոյեմբեր-դեկտեմբեր 2013


ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

2013թ.	**Լավագույն աշխատակից**	«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ (նախկին անվանումը՝ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ)

Էջ 5՝ 6-ից

2007թ.	**Հավաստագիր, Առաջին տեղ**	ԵՊՀ շախմատի միջֆակուլտետային թիմային առաջնություն
2004–2007թթ.	**Դիպլոմ, Առաջին տեղ**	Մաթեմատիկայի աշակերտական օլիմպիադայի Վայոց ձորի մարզային առաջնություն
2005թ.	**Դիպլոմ, Առաջին տեղ**	Շախմատի Հայաստանի գյուղական համայնքային երիտասարդական առաջնություն
2004թ.	**Հավաստագիր, Առաջին տեղ**	Շախմատի Վայոց ձորի մարզի մինչև 20 տարեկանների առաջնություն

Էջ 6՝ 6-ից



ԴԻՊԼՈՄ
ДИПЛОМ
DIPLOMA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարան
(բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը)

ԴԻՊԼՈՄ

AB № 122416

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ

մայիսի «23»-ի ՈՐՈՇՄԱՄԲ

Տարոն Արտակի Վարազդատյան
(անուն, հայրանուն, ազգանուն)

ՇՆՈՐՀՎԱԾ Է

կառավարման

ԲԱԿԱԼԱՎՐԻ

ԱՍՏԻՃԱՆ

«Կառավարում»

ՈՐԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ռեկտոր

«23» մայիսի 2011 թ. ք. Երևան Գրանցման № 103286

ԴԻՊԼՈՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Ереванский государственный университет
(наименование высшего учебного заведения)

ДИПЛОМ

AB № 122416

РЕШЕНИЕМ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКЗАМЕНАЦИОННОЙ КОМИССИИ

ОТ "23" мая 2011 ГОДА

Вараздатяну Тарону Сираковичу
(фамилия, имя, отчество)

ПРИСУЖДЕНА СТЕПЕНЬ БАКАЛАВРА

менеджмента

СПЕЦИАЛЬНОСТИ

"Менеджмент"

Председатель государственной экзаменационной комиссии

Ректор

"23" мая 2011 г. г. Ереван Регистрационный № 103286

ДИПЛОМ ЯВЛЯЕТСЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОКУМЕНТОМ О ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ

REPUBLIC OF ARMENIA

Yerevan State University
(higher educational establishment)

DIPLOMA

AB № 122416

BY THE RESOLUTION OF THE STATE EXAMINATION COMMISSION OF

"23" May 2011

Taron Varazdatyan
(first name, last name)

IS AWARDED THE BACHELOR'S DEGREE

of Management

IN THE FIELD OF

"Management"

Chairman of the State Examination Commission

Rector

"23" May 2011 c. Yerevan Registration № 103286

DIPLOMA IS THE STATE DOCUMENT OF THE HIGHER EDUCATION

ԴԻՊԼՈՄԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Սույն դիպլոմի հավելվածը համապատասխանում է Եվրոպական հանձնաժողովի, Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ/ՍԵՊԵՍ-ի կողմից մշակված ձևին: Հավելվածը կոչված է տրամադրելու բավարար չափով անաչառ տվյալներ որակավորումների (դիպլոմների, աստիճանների, վկայականների և այլնի) միջազգային թափանցիկությունը և դրանց արդարացի ակադեմիական ու մասնագիտական ճանաչումը բարելավելու համար: Սույն հավելվածը նախատեսված է որակավորման բնօրինակում (որին այն կից է) նշված անձի ուսումնասիրած և հաջողությամբ ավարտած ուսումնառության բնույթի, մակարդակի, ձևի և բովանդակության ու կարգավիճակի նկարագրությունը ներկայացնելու համար: Այն պետք է զերծ լինի ճանաչման վերաբերյալ ցանկացած սուբյեկտիվ գնահատականից, համարժեքության մասին պնդումներից կամ առաջարկություններից: Անհրաժեշտ է տեղեկություններ զետեղել բոլոր ութ բաժիններում: Այնտեղ, որտեղ դրանք բացակայում են, անհրաժեշտ է ներկայացնել դրանց բացակայության պատճառը:

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ

1.1. Ազգանուն

Վարազդատյան

1.2. Անուն, հայրանուն

Տարոն Սիրակի

1.3. Ծննդյան ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)

21 հոկտեմբերի, 1992

1.4. Ուսանողի անհատական համարը կամ թվանիշը (առկայության դեպքում)

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2.1. Որակավորման անվանումը և (առկայության դեպքում) շնորհվող կոչումը (բնագրի լեզվով)

Կառավարման բակալավր

DIPLOMA SUPPLEMENT

This Diploma Supplement follows the model developed by the European Commission, Council of Europe and UNESCO/CEPES. The purpose of the supplement is to provide sufficient independent data to improve the international "transparency" and fair academic and professional recognition of qualifications (diplomas, degrees, certificates etc.). It is designed to provide a description of the nature, level, context, content and status of the studies that were pursued and successfully completed by the individual named on the original qualification to which this supplement is appended. It should be free from any value-judgments, equivalence statements or suggestions about recognition. Information in all eight sections should be provided. Where information is not provided, an explanation should give the reason why.

1. INFORMATION IDENTIFYING THE HOLDER OF QUALIFICATION

1.1. Surname:

Varazdatyan

1.2. First name(s):

Taron

1.3. Date of birth (day, month, year):

21 October, 1992

1.4. Student identification number or code (if available):

2. INFORMATION IDENTIFYING QUALIFICATION

2.1. Name of qualification and (if applicable) title conferred (in original language):

Bachelor of Management

2.2. Մասնագիտությունը (մասնագիտացումը)	2.2. Main field(s) of study for the qualification:
Կառավարում	*Management*
2.3. Որակավորումը շնորհող հաստատության անվանումը և կարգավիճակը (բնագրի լեզվով)	2.3. Name and status of awarding institution (in original language):
«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Հիմնադրվել է կառավարության կողմից 1919 թվականին:	*"Yerevan State University" state non-commercial organization was established by the Government in 1919.*
2.4. Ուսուցումը կազմակերպած հաստատության անվանումը և կարգավիճակը (եթե տարբեր է 2.3. կետում նշվածից) (բնագրի լեզվով)	2.4. Name and status of the institution (if different from 2.3.) administering studies (in original language):
2.5. Դասավանդման և քննական լեզուն(երը)	2.5. Language(s) of instruction/examination:
Հայերեն	*Armenian*
3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՍԻՆ	**3. INFORMATION ON THE LEVEL OF THE QUALIFICATION**
3.1. Որակավորման մակարդակը	3.1. Level of qualification:
ՀՀ բարձրագույն կրթության առաջին՝ բակալավրի որակավորման աստիճան	*Bachelor's Degree, which is a first cycle qualification of higher education in the Republic of Armenia.*
3.2. Ծրագրի պաշտոնական տևողությունը	3.2. Official length of the programme:
Առկա ուսուցման ձևով՝ չորս տարի	*Four years for full-time mode of study*
3.3. Ընդունելության պահանջները	3.3. Access requirement(s):
Առնվազն միջնակարգ լրիվ ընդհանուր կրթության ավարտական վկայականի առկայություն: Ընդունելությունը կատարվում է միասնական պետական ավարտական քննությունների արդյունքների մրցութային ցուցանիշների հիման վրա:	*At least presence of the secondary general education graduation certificate. The admission is merit-based hold on the results of common state graduation exams.*
4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ	**4. INFORMATION ON THE CONTENTS AND RESULTS GAINED**
4.1. Ուսուցման ձևը	4.1. Mode of study:
Առկա	*Full-time*

4.2. Ծրագրի պահանջները

Կառավարման բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար պահանջվում է 4 տարվա ուսումնառություն և ավարտական աշխատանքի պաշտպանություն: Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը ենթադրում է հետևյալ մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների առկայությունը:
Կառավարման բակալավրը՝
(Գիտելիք) Ունի կառավարման տարբեր ասպարեզների համակարգված գիտելիք, կարող է օգտագործել բնագավառի հիմնարար փաստերը, մոտեցումները, սկզբունքները և տեսությունները, իսկ որոշակի ղեկավարության դեպքում՝ նաև դրանց կիրառական ասպեկտները: Տիրապետում է կառավարմանը հարակից բնագավառների, մասնավորապես, տնտեսագիտության հիմնարար գիտելիքի:
(Կարողություն) Կարող է գնահատել, մեկնաբանել և սինթեզել կազմակերպության կառավարմանն առնչվող տնտեսագիտական տվյալները և տեղեկատվությունը իր իրավասությունների սահմաններում: Կարող է օգտագործել բնագավառի յուրահատուկ հետազոտական մեթոդները: Գիտահետազոտական հաստատություններում, ձեռնարկություններում, ինչպես նաև պետական կառավարման տարբեր օղակներում կարող է կատարել կառավարչական վերլուծություններ, կառավարման տարբեր խնդիրների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ: Ունակ է գրավոր և բանավոր ներկայացնելու աշխատանքները մասնագիտական լսարանին և կարող է արդյունավետ կերպով աշխատել խմբի կազմում:
(Հմտություններ/աշխատանքի բնագավառը) Կարող է ծավալել ինքնուրույն մասնագիտական գործունեություն և որոշակի ղեկավարության ներքո ունակ է իրականացնելու հետազոտական աշխատանքներ ակադեմիական և պրակտիկ ոլորտներում: Ունի բավարար գիտելիքներ և հմտություններ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում՝ կառավարման կամ հարակից մասնագիտություններով ուսումը շարունակելու համար:

4.2. Programme requirements:

To be awarded Bachelor's degree in Management a 4 years study and final paper defense is required. The achievement of the programme learning outcomes implies presence of the following professional knowledge, skills and competences.
Bachelor of Management:
(Knowledge) Has a systemic knowledge in different fields of Management, can use the basic facts, concepts, principles and theories of the discipline, also use the practical aspects under a minimum guidance; has a basic knowledge in other disciplines relevant to Management, particularly in Economics.
(Skills) Within his own competence can assess, interpret and synthesize economic data and information relevant to the organisation management. Can employ the specific research methods of the field. Can perform economic analyses and make suggestions on management issues in scientific research institutions, enterprises and government organisations. Can present the materials in front of informed auditorium in a written form or orally; can work effectively in a team.
(Competences/Employment area) Can conduct independent professional activities and carry out research work under some guidance of a team leader in academic and industrial fields. Has enough knowledge and skills to advance on a second level of higher education in Management or in other fields relevant to Management.

4.3. Ուսումնական ծրագրի մանրամասները (ուսումնասիրած մոդուլները կամ դասընթացները) և վաստակած գնահատականները, գնահատման միավորները, կրեդիտները (եթե այս տեղեկատվությունն առկա է պաշտոնական ակադեմիական տեղեկագրում, այն պետք է օգտագործվի այստեղ).

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թիվ	Դասընթաց	Լսարանային ժամաքանակը (ժամ)	Գնահատման միավորը (գնահատականը)
1.	Կրոնի պատմություն	48	ստուգված
2.	Մշակութաբանություն	48	ստուգված
3.	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր	44	ստուգված
4.	Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բժշկական օգնություն	72	ստուգված
5.	<Կապիտալի> քննական վերլուծություն	48	ստուգված
6.	Արտադրության կազմակերպում	72	4(լավ)
7.	Կառավարչական որոշումների ընդունում	96	5(գեր)
8.	Անձնակազմի կառավարում	48	ստուգված
9.	Կառավարչական հաշվառում և վերահսկում	48	ստուգված
10.	Հայոց լեզու և գրականություն	96	5(գեր)
11.	Բարձրագույն մաթեմատիկա	288	4(լավ)
12.	Համակարգչից օգտվելու հմտություններ	48	ստուգված
13.	Ռիսկերի կառավարում և ապահովագրություն	96	5(գեր)
14.	Կազմակերպական վարք	96	ստուգված
15.	Կառավարման մասնագիտության ներածություն	96	4(լավ)
16.	Սոցիալական հոգեբանություն	48	ստուգված
17.	Պետական և մունիցիպալ կառավարման հիմնահարցեր	48	ստուգված
18.	Տնտեսության տեղեկատվական համակարգեր	48	ստուգված
19.	Հայոց պատմության հիմնահարցեր	96	3(բավ)
20.	Օտար լեզու (ֆրանսերեն)	288	5(գեր)
21.	Ռուսաց լեզու	288	4(լավ)
22.	Փիլիսոփայության հիմունքներ	96	4(լավ)
23.	Ֆիզ. դաստիարակություն	128	ստուգված
24.	Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ	48	ստուգված
25.	Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաները	48	ստուգված
26.	Տնտեսագիտության տեսություն	192	4(լավ)
27.	Գործոյթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ	96	4(լավ)
28.	Հավանականություն և կիրառական վիճակագրություն	96	4(լավ)
29.	Տնտեսական պատմություն	96	ստուգված
30.	Անցումային տնտեսության տեսություն	96	3(բավ)
31.	Համաշխարհային տնտեսություն	96	4(լավ)
32.	Միկրոտնտեսագիտություն	96	5(գեր)
33.	Տնտեսական վիճակագրություն	96	ստուգված
34.	Միջազգային տնտեսագիտություն	96	4(լավ)
35.	Հաշվապահական հաշվառում և աուդիտ	96	5(գեր)
36.	Մակրոտնտեսագիտություն	96	4(լավ)
37.	Տնտեսագիտական մտքի պատմություն	96	ստուգված

38.	Ձեռնարկության էկոնոմիկա		
39.	Ֆինանսներ	96	3(բավ)
40.	Բանկային գործ	96	5(գեր)
41.	Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա	96	5(գեր)
42.	Մենեջմենթ	96	5(գեր)
43.	Տնտեսության պետական կարգավորում	96	4(լավ)
44.	Բիզնեսի կազմակերպում և կառավարում	96	5(գեր)
45.	Տնտեսական ինֆորմատիկա	72	5(գեր)
46.	Տնտեսական իրավիճակների մոդելավորում	96	ստուգված
47.	էկոնոմետրիկա	96	ստուգված
48.	Գործավարություն օտար լեզվով (ֆրանսերեն)	96	ստուգված
49.	Ֆինանսական շուկաներ	96	ստուգված
50.	Ձեռնարկատիրական իրավունք	72	ստուգված
51.	Մարքեթինգի հիմունքներ	48	ստուգված
52.	Արտաքին տնտեսական կապերի հիմնահարցեր	96	ստուգված
53.	Նախագծերի կառավարում	48	ստուգված
54.	Համակարգերի վերլուծություն և նախագծում	48	ստուգված
55.	Կուրսային աշխատանք 1	48	5(գեր)
56.	Կուրսային աշխատանք 2	-	5(գեր)
57.	Ուսումնական (հաշվողական) պրակտիկա	48	ստուգված
58.	Արտադրական պրակտիկա	-	ստուգված
59.	Ամփոփիչ ավարտական քննություն «Կառավարում»	-	5(գեր)
60.	Պաշտպանել է ավարտական աշխատանք «ՀՀ համայնքների համաչափ զարգացման և բյուջեի պետական աջակցման խնդրի մոդելավորումը» թեմայով	-	5(գեր)
		Ընդամենը՝	5068

ԵՊՀ 1919 YEREVAN STATE UNIVERSITY

4.3. Programme details (e.g. modules or units studied) and the individual grades/marks/credits obtained (if this information is available on an official transcript this should be used here):

The Academic Transcript

#	Course Unit	Contact hours (hours)	Assessment score (Grades)
1.	History of Religions	48	Passed
2.	Cultural Studies	48	Passed
3.	Civil Defense and Issues of State Emergency	44	Passed
4.	First Medical Aid in Extreme Situations	72	Passed
5.	Critical Study of Marx's "Capital"	48	Passed
6.	Industrial Engineering	72	4(Good)
7.	Managerial Decision-Making	96	5(Excellent)
8.	Personnel Management	48	Passed
9.	Management Accounting and Control	48	Passed
10.	Armenian Language and Literature	96	5(Excellent)
11.	Higher Mathematics	288	4(Good)
12.	Basics of Informatics	48	Passed
13.	Risk Management and Insurance	96	5(Excellent)
14.	Organisational Behaviour	96	Passed
15.	Introduction to Management	96	4(Good)
16.	Social Psichology	48	Passed
17.	Main Issues of State and Municipal Management	48	Passed
18.	Economic Information Systems	48	Passed
19.	Issues of Armenian History	96	3(Fair)
20.	Foreign Language (French)	288	5(Excellent)
21.	Russian	288	4(Good)
22.	Basics of Philosophy	96	4(Good)
23.	Physical Training	128	Passed
24.	Basics of Ecology and Nature Protection	48	Passed
25.	Modern Concepts of Natural Sciences	48	Passed
26.	Theory of Economics	192	4(Good)
27.	Mathematical Methods of Operation Research	96	4(Good)
28.	Probability and Applied Statistics	96	4(Good)
29.	Economic History	96	Passed
30.	Theory of Transition Economy	96	3(Fair)
31.	World Economy	96	4(Good)
32.	Microeconomics	96	5(Excellent)
33.	Economic Statistics	96	Passed
34.	International Economics	96	4(Good)
35.	Accounting and Audit	96	5(Excellent)
36.	Macroeconomics	96	4(Good)
37.	History of Economic Thought	96	Passed
40.	Firm Economics		
41.	Finance		
42.	Banking		
43.	Human Resources and Labour Economics		
44.	Management		
	Public Regulation of Economy		
	Business Organisation and Management		

		Contact hours	Assessment score (Grades)	ained (if this
	Firm Economics			
	Finance	96	3(Fair)	
40.	Banking	96	5(Excellent)	
41.	Human Resources and Labour Economics	96	5(Excellent)	
42.	Management	96	5(Excellent)	
43.	Public Regulation of Economy	96	4(Good)	
44.	Business Organisation and Management	96	5(Excellent)	
45.	Economic Informatics	72	5(Excellent)	
46.	Simulation of Economic Processes	96	Passed	
47.	Econometrics	96	Passed	
48.	Business Correspondence in Foreign Language (French)	96	Passed	
49.	Financial Markets	96	Passed	
50.	Business Law	72	Passed	
51.	Basics of Marketing	48	Passed	
52.	General Issues on Foreign Economic Relations	96	Passed	
53.	Project Management	48	Passed	
54.	System Analysis and Design	48	Passed	
55.	Coursework 1	48	Passed	
56.	Coursework 2	-	5(Excellent)	
57.	Internship	-	5(Excellent)	
58.	Internship	48	Passed	
59.	Final Graduation Exam "Management"	-	Passed	
60.	Defended graduation thesis on the topic "The Modeling of Proportionate Development of RA Communities and Budget State Support Problems"	-	5(Excellent)	
		Total	5068	

1919 YEREVAN STATE UNIVERSITY

4.4. Գնահատման գործող համակարգը և, եթե կա այդպիսին, բացատրություն գնահատականների բաշխման վերաբերյալ

Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է ստորև ներկայացված գնահատականների 5 միավորանոց սանդղակը.

Գնահատման միավորը	Գնահատականը
5	«Գերազանց»
4	«Լավ»
3	«Բավարար»
2	«Անբավարար»
-	«Ստուգված»/«Չստուգված»

Առաջին դասընթացի կամ ուսումնական մոդուլի համար նվազագույն դրական միավորը 3-ն է (բավարար):

4.4. Grading scheme and, if available, grade distribution guidance:

The following 5 point grading scheme is used for assessing student learning outcomes.

Assessment score	Grade
5	"Excellent"
4	"Good"
3	"Fair"
2	"Fail"
-	"Passed"/ "Not passed"

The minimum passing grade is "Fair" (3 points) for a course unit or study module.

4.5. Որակավորման համընդհանուր դասակարգումը (բնագրի լեզվով)

Բակալավրի աստիճան

4.5. Overall classification of the qualification (in original language):

Bakalavri Astichan (Bachelor's Degree)

5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

5.1. Հետագա ուսումնառության հնարավորությունը

Որակավորումը հնարավորություն է տալիս շարունակել ուսումնառությունը հաջորդ կրթական փուլում՝ մագիստրատուրայում, ուսումնառության արդյունքների մրցութային ցուցանիշների հիման վրա:

5. INFORMATION ON THE FUNCTION OF THE QUALIFICATION

5.1. Access to further study:

The qualification allows to continue study in the next cycle of higher education - in Master's programme - based on the competition criteria of study results.

5.2. Մասնագիտական կարգավիճակը (եթե կիրառելի է)

Մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար լրացուցիչ պահանջներ չեն ներկայացվում:

5.2. Professional status (if applicable):

There are no additional requirements for professional occupation.

ble, grade distributio

ne is used for
es.

6. ԼՐԱԾՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Լրացուցիչ տեղեկություններ

Որակավորումը շնորհած Համալսարանը կիրառում է ECTS կրեդիտային համակարգը իր կուտակային և փոխանցման գործառույթներով:
Դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման, ինչպես նաև ուսումնական ծրագրերի պարբերաբար վերանայման նպատակով Համալսարանը կանոնավոր կերպով իրականացնում է ուսանողական հարցումներ և շրջանավարտների՝ իրենց ուսումնառությունից բավարարվածության հարցումներ:

6. ADDITIONAL INFORMATION

6.1. Additional information:

The University regularly conducts student surveys and graduate satisfaction surveys for continuing enhancement of teaching and learning as well as for periodic review of study programmes.

6.2. Այլ տեղեկատվական աղբյուրներ

ԵՊՀ պաշտոնական կայքէջը՝ http://www.ysu.am
ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքէջը՝ http://www.edu.am
Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի կայքէջը՝ http://www.armenic.am

6.2. Further information sources:

The official Website of Yerevan State University: http://www.ysu.am
The official Website of the Ministry of Education and Science of the Republic of Armenia: http://www.edu.am
The official Website of the National Information Center for Academic Recognition and Mobility: http://www.armenic.am

7. ՀԱՎԵԼՎԱԾԻ ՎԱՎԵՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

7. CERTIFICATION OF THE SUPPLEMENT

7.1. Ամսաթիվը

14 հուլիսի, 2011

7.1. Date:

14 July, 2011

7.2. Ստորագրությունը

Ա. Գրիգորյան

7.2. Signature:

A.Grigoryan

7.3. Պաշտոնը

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր

7.3. Capacity:

Vice-Rector for Academic Affairs

7.4. Պաշտոնական դրոշմը կամ կնիքը

7.4. Official stamp or seal:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Государственный университет Армении
Armenian State University
01506928

ԴԻՊԼՈՄ № AB122416
DIPLOMA

8. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ - Հայաստան

Հայաստանի կրթության համակարգը բաղկացած է 12-ամյա ընդհանուր միջնակարգ կրթությունից (տարրական, հիմնական և ավագ դպրոց), նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթությունից և բարձրագույն կրթությունից:

Բարձրագույն կրթությունը կարգավորվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով և գտնվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության լիազորության ներքո: Օրենքները համահունչ են Բոլոնիայի գործընթացի հիմնական խնդիրներին:

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը ներառում է 26 պետական և 40 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 8 արտերկրի բուհերի մասնաճյուղ: Բարձրագույն կրթությունն իրականացվում է ինստիտուտներում, համալսարաններում, ակադեմիաներում և կոնսերվատորիայում:

Բարձրագույն ուսումնական դասընթացները չափվում են կրեդիտներով, ընդ որում մեկ տարվա ուսումը համարժեք է ուսանողի 1800 ժամ բեռնվածությանը և սահմանվում է 60 կրեդիտ: Կրեդիտային համակարգը համադրելի է Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի (ECTS) հետ: Ուսումնառությունն իրականացվում է առկա կամ հեռակա ձևերով: Որպես կանոն, ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և ներառում է երկու կիսամյակ՝ համապատասխանաբար 20 և 22 շաբաթ տևողությամբ:

Որակի ապահովում

2008 թվականից սկսած Հայաստանում գործում է բարձրագույն կրթության հավատարմագրման և գնահատման անկախ ազգային գործակալություն (Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ)), որը պատասխանատու է ծրագրերի և հաստատությունների որակի գնահատման համար:

Բարձրագույն կրթության որակավորումներ

Բարձրագույն կրթության Բակալավրի որակավորման (առաջին աստիճան) համար սահմանված է առնվազն 180 կրեդիտ (երեք տարի տևողությամբ առկա ուսուցում): *Բակալավրի որակավորումը ձեռք է բերվում առնվազն երեք կամ չորս տարի (ընդհանուր բժշկական կամ զազմական կրթության դեպքում՝ 5 տարի) տևողությամբ առկա ուսուցումից հետո:* Բակալավրի որակավորման կրթական ծրագիրը կազմված է հիմնական, մասնագիտացված և կամընտրական դասընթացներից: Առաջին աստիճանի ընդունելության համար սահմանված նվազագույն պահանջը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ավարտական

8. INFROMATION ABOUT THE NATIONAL HIGHER EDUCATION SYSTEM-Armenia

The Armenian education system consists of 12- year general secondary education (primary, basic and high school), preliminary and middle level vocational education and higher education.

Higher Education is regulated by the Law on Education and the Law on Higher and Post-Graduate Education of the Republic of Armenia, and is the responsibility of the Ministry of Education and Science. The laws are in line with the main objectives of the Bologna Process.

The Armenian higher education system comprises 26 state and 40 private higher education institutions 8 HEI branches . Higher Education is provided in institutes, universities, academies and conservatory.

Higher Education studies are measured by credits, with one year of studies equivalent to 1800 hours of student work, and is defined as 60 credits. The credit system is compatible with the European Credit Transfer and Accumulation System (ECTS). The mode of studies is either full-time or part-time. The academic year, as a rule, starts on September 1st and is comprised of two semesters with 20 and 22 weeks duration, respectively.

Quality Assurance

Since 2008 an independent national agency for accreditation and evaluation of higher education in Armenian (ANQA) is responsible for assessing the quality of programmes and institutions.

Higher Education Qualifications

The Bachelor (first cycle) higher education degree consists of at least 180 credits (three years of full-time study). The degree is called **bakalavr** and is obtained after three or four (5 years for general medicine and military studies) years of full-time studies. The Bachelor degree programmes include core courses, specialized courses and electives The minimum requirement for admission to the first cycle is secondary (full) general education graduation certificate or middle level vocational degree. The program ends with state exams and/or thesis defence.

The Master (second cycle) degree consists of at least 60 credits (one year of full-time study). The degree is called **magistros** for all fields of study except some medical specializations (bjishk) and is obtained after one or two years of study. The admission requirement for the second cycle higher education degree is a first-cycle degree. The Master degree programmes include core and specialized courses, advanced studies, interdisciplinary programmes, internship. The admission requirement for the second-cycle

ՕՐՏ THE NATIONAL HIGHER
Armenia
system
tion (primary, basic and high
dle level vocational education
by the Law on Education and
adiate Education of the
responsibility of the
. The laws are in line with
Process
stem compr-

...րական կամ միջին մասնագիտական աստիճանի առկայությունն է: *Ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ավարտական քննություններով և/կամ ավարտական թեզի պաշտպանությամբ:*

Մագիստրոսի որակավորման (երկրորդ աստիճան) համար սահմանված է առնվազն 60 կրեդիտ (մեկ տարի տևողությամբ առկա ուսուցում): Մագիստրոսի որակավորումը շնորհվում է ուսման բոլոր բնագավառների համար, բացառությամբ որոշ բժշկական մասնագիտությունների (որակավորումը՝ բժիշկ), և ձեռք է բերվում մեկ կամ երկու տարվա առկա ուսուցումից հետո: Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի ընդունելության համար սահմանված պահանջը առաջին աստիճանի որակավորման առկայությունն է: Մագիստրոսի որակավորման կրթական ծրագրերը ներառում են հիմնական և մասնագիտացված դասընթացներ, վերապատրաստման դասընթացներ, միջառարկայական ծրագրեր, պրակտիկա: Ծրագիրն ավարտվում է *ամփոփիչ ավարտական* քննությամբ և/կամ մագիստրական թեզի պաշտպանությամբ:

Մագիստրոսի որակավորում ստացած շրջանավարտներն ունեն ընտրված ուսման բնագավառի լավ իմացություն, օժտված են անկախ գիտական հետազոտության անցկացման, կառավարման, մասնագիտական ինքնակատարելագործման համար անհրաժեշտ կարողություններով և հմտություններով, ինչպես նաև լավ հաղորդակցական և լեզվական հմտություններով:

Մագիստրոսի կամ համարժեք որակավորում *(դիպլոմավորված մասնագետ)* ունեցող անձինք կարող են դիմել ասպիրանտուրա (դոկտորանտուրա): Այդ դասընթացների նպատակն է ուսումնառուներին տրամադրել հետազոտության ընտրված բնագավառի լայն և համակողմանի տեսական ու գործնական գիտելիքներ, նրանց օժտել նոր գիտելիքների ստեղծման ունակություններով:

Ասպիրանտուրայի պաշտոնական տևողությունը 3 տարի է: Դոկտորական ծրագրով սովորելու համար ընդունված ուսումնառուն պետք է ավարտի կրթական որոշակի ծավալ (180 կրեդիտ) և պաշտպանի հրապարակային ատենախոսություն: Բարեհաջող պաշտպանության դեպքում շնորհվում է Գիտությունների թեկնածուի աստիճան: Եթե ուսումնառուն ավարտում է կրթական մասը, առանց ատենախոսության պաշտպանության, ապա նրան շնորհվում է Հետազոտողի որակավորում:

Գիտությունների դոկտորի աստիճանը բարձրագույն գիտական աստիճան է, որը շնորհվում է Գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող անձին՝ որպես նրա գիտական նվաճումների ճանաչում և դոկտորական ատենախոսության բարեհաջող հրապարակային պաշտպանությունից հետո:

is a bachelor degree. The programme ends with state exam and defense of thesis.

Graduates with Master degree have a good knowledge of chosen study fields; capacities and skills necessary for independent scientific-research, management, professional self-improvement, and good communication and language skills.

Students with Master or a relevant degree (old degrees) can apply for Aspirantura (Doctorate). The goal of these studies is to provide students with broad and in-depth theoretical and practical knowledge of a chosen field of research and abilities to create new knowledge.

Nominal duration of Aspirantura is 3 years. A student who has been admitted to doctoral programme must complete a given amount of studies (180 credits), and publicly defend dissertation. In case of successful defense Candidate of Science (**gitutunneri teknatsu**) degree is awarded. If a student completes the required amount of studies but fails to defend a thesis, a Researcher (**hetazotox**) degree is awarded.

Doctor of Sciences (gitutyunneri doctor) is an advanced scientific degree which is awarded to an individual holding Candidate of Sciences degree as an acknowledgement of his scientific achievements and after successful public thesis defense.



ԴԻՊԼՈՄ
ДИПЛОМ
DIPLOMA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարան
(բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը)

ԴԻՊԼՈՄ

ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ

AM № 039822

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ

մայիսի «25»-ի ՈՐՈՇՄԱՄԲ

Տարոն Վրույրի Վարազդատյանին
(անուն, հայրանուն, ազգանուն)

ՇՆՈՐՀՎԱԾ Է

կառավարման

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ

ԱՍՏԻՃԱՆ

«Կառավարում»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Պետական բնական հանձնաժողովի նախագահ

Ռեկտոր

2013 թ. թ. Երևան Գրանցման № 112830

ԴԻՊԼՈՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Ереванский государственный университет
(наименование высшего учебного заведения)

ДИПЛОМ
С ОТЛИЧИЕМ

AM № 039822

РЕШЕНИЕМ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКЗАМЕНАЦИОННОЙ КОМИССИИ

ОТ "25" мая 2013 ГОДА

Варазdатяну Тарону Сираковичу
(Фамилия, имя, отчество)

ПРИСУЖДЕНА СТЕПЕНЬ МАГИСТРА

менеджмента

ПО СПЕЦИАЛЬНОСТИ

"Менеджмент"

Председатель государственной экзаменационной комиссии

Ректор

2013 г. г. Ереван Регистрационный № 112830

ДИПЛОМ ЯВЛЯЕТСЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОКУМЕНТОМ О ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ

REPUBLIC OF ARMENIA

Yerevan State University
(higher educational establishment)

DIPLOMA
WITH HONOUR

AM № 039822

BY THE RESOLUTION OF THE STATE EXAMINATION COMMISSION OF

"25" May 2013

Varazdatyan Taron
(first name, last name)

IS AWARDED THE MASTER'S DEGREE

of Management

"Management"

Chairman of the State Examination Commission

Rector

2013 c. Yerevan Registration № 112830

DIPLOMA IS THE STATE DOCUMENT OF THE HIGHER EDUCATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

Մագիստրոսի ԴԻՊԼՈՄԻ ՀԱՎԵԼՎԱԾ

(Անվավեր է առանց դիպլոմի)

